ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անուն(ներ)ը, Ազգանուն(ներ)ը

Լուսինե Առաքելյան

2.ՀԲաղեցրածՊաշտոն(ներ)ը

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

3.Գործուղման Վայրը և Ժամկետները

Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, 2019 թվականի դեկտեմբերի 9-10:

4.Հրավիրող Կողմը

Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպություն (ՏՀԶԿ) եւ ՌԴ ֆինանսների նախարարություն

5.Գործուղման նպատակը (Աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

«ԱՊՀ երկրներում ֆինանսական կրթություն» թեմայով բարձրաստիճան համաժողով

6.Քննարկված Թեմաները

- Ֆինանանսական կրթությունը դպրոցներում
- Ռազմավարական ծրագրի հաջորդ փուլի միջոցառումների ծրագրի քննարկում

7. Հանդիպումները

Տեղի են ունեցել հանդիպումներ ՏՀԶԿ ներկայացուցիչների հետ, ինչպես նաեւ ֆինանսական կրթության ծրագրի շրջանակում մասնակցություն ունեցող ԱՊՀ անդամ երկրների ներկայացուցիչների հետ: Ֆինանսական կրթության քաղաքականության իրականացման շրջանակում համաժողովի ընթացքում տեղի է ունեցել ԱՊՀ անդամ պետությունների փորձի փոխանակում, գործողության պլանի և առաջնահերթությունների քննարկում:

Համաժողովի ընթացքում անդրադարձ է եղել ֆինանսական գրագիտության, (այդ թվում՝ ներառական մակարդակում) զարգացման, ֆինանսական կրթության ազգային ռազմավարության մշակման, դպրոցների և արտադպրոցական նախաձեռնությունների միջոցով երիտասարդների ֆինանսական գրագիտության կարիքների գնահատման, միգրանտների և նրանց ընտանիքների ֆինանսական գրագիտության կարիքների բացահայտման և բավարարման ուղղությամբ նախատեսվող զեկույցներին:

8. Ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Ներկայացնելով Հայաստանի փորձը՝ իմ ելույթում նշել եմ, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը հանդիպման մասնակից երկրների շարքում միակն է, որը ֆինանսական կրթության իրականացման վերահսկողության մեխանիզմներ ունի և պետական մակարդակով ուշադրության կենտրոնում է պահում այս հարցը: Հայաստանը միակն է նաև, որտեղ ֆինանսական կրթություն է դասավանդվում ոչ թե արտաուսումնական կամ արտադասարանական ծրագրերով, այլ՝ ինտեգրված պարտադիր առարկաների ծրագրի մեջ:

Նշել եմ նաեւ, որ ծրագիրն իր ակնկալվող սոցիալ-տնտեսական ազդեցությամբ հարում է ՀՀ տնտեսական զարգացման ռազմավարությանը, որի արդյունքում կապահովվի հավելյալ տնտեսական ակտիվություն ինչպես կրթության, այնպես էլ հարակից ոլորտներում: Ծրագրի իրականացման շարունակականությունը կհանգեցնի մտածելակերպային փոփոխության, կդաստիարակի նոր՝ ստեղծարար արժեքներ, որոնք կբարելավեն սոցիալական արժեհամակարգը երիտասարդների շրջանում:

9. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները:

Հաշվի առնելով Հայաստանի դրական փորձը՝ ծրագրի շարունակականությունն ապահովելու համար հայկական կողմը եւ ՏՀԶԿ ներկայացուցիչները պայմանավորվածություն ձեռք բերեցին համատեղ մշակելու ռազմավարության հաջորդ փուլի միջոցառումների ծրագիրը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

12.12.2019